

ցիւնները, պատրիարքը վերջերս ուղղել է մի թուղթ Ռուսաց կառավարչական Ս. Սինոդին, Այդ թուղթն է որ մէջ է բերում Դերք. Вѣст. իր № 24-ում, իբրև մի շատ կարևոր երևոյթ օրթոդոքս եկեղեցիների կեանքում: Պատրիարքը յայտնում է, որ ինքը ընդհանուր օրթոդոքս եկեղեցիների տեսակէտից ամէն մի կարևոր խնդրի առթիւ այսուհետև պէտք է հարցնէ այդ ինքնուրոյն եկեղեցիների կարծիքը, որպէս զի յառաջ բերէ եղբայրական միութիւն և ջերմ հաղորդակցութիւն քոյր եկեղեցիների մէջ:

Այդպիսի առաջնակարգ կարևորութիւն ունեցող հարց է համարում Պատրիարքը եկեղեցիների միութեան խնդիրը. ուստի առաջարկում է որոշել օրթոդոքս եկեղեցիների վերաբերմունքը դէպի կաթոլիկ և բողոքական եկեղեցիները և թէ ինչ եղանակով այդ եկեղեցիներին վերադարձնել ընդհանրական եկեղեցու գիրկը, որի անաղարտ պահանջը համարում է ի հարկէ օրթոդոքս եկեղեցին: Թէև մեծ ցաւ է պատճառում Պատրիարքին այդ եկեղեցիների յամառութիւնը, բայց միութիւնը անհնարին չի համարում: Այդպիսի մի յուսատու երևոյթ է համարում հին կաթոլիկների հակումն միանալ օրթոդոքս եկեղեցու հետ. ուստի շատ ցանկալի է համարում պարզաբանել, թէ ինչպիսի տարբերութիւն կայ հին կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների մէջ:

Պակաս ուշադրութեան արժանի չէ և ընդհանուր տօմարի խնդիրը: Հետաքրքրական է Պատրիարքի յայտնած կարծիքը այս հարցի նկատմամբ: Նա նկատի առնելով որ տօմարի խնդիրը, որքան քաղաքացիական, պետական կարևորութիւն ունի, նոյնքան և եկեղեցական, կապուած լինելով պատեքի հետ, անհրաժեշտ է համարում նախ քան խնդրի այսպէս կամ այնպէս լուծուելը ընդհանուր օրթոդոքս եկեղեցիների վճիռը: Ահա այս խնդիրները Պատրիարքը իր թղթով առաջարկում է բոլոր եկեղեցիների խորհրդածութեան:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Այն հակայական յաջողութիւնը, որ ունի ներկայումս հռոմէական—կաթոլիկ եկեղեցին արեւելքում իւր քարոզիչների ձեռքով, խիստ մեծ զայրոյթ է պատճառում ուղղափառ առաքելութեան մշակներին, որոնք ամէն կերպ աշխատում են խոչնդոտ

հանդիսանալ նրանց. սակայն միանգամայն ապարդիւն տեղը: Կաթոլիկ քարոզչութիւնը և առաքելութիւնը շատ հաստատուն հիմունքներ լիքայ են դրուած, նրանց չի պակասում ո՛չ նիւթական և ո՛չ էլ բարոյական միջոցներ. մի հանգամանք, որին մեծ կարիք ունի ուղղափառ առաքելութիւնը: Կ. Պոլսի ռուս առաքելութեան տեսուչ վարդապետը, ի նկանի ունենալով իրերի այդ դրութիւնը և այն անհաւատարմացումը, որ կայ կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների մէջ, դիմել է ռուսաց ս. Սինոդին և խնդրել, որ իրեն միջոց տրուի Սան—Ստեփանօյում, որտեղ աչքի ընկնող կերպով զօրեղ է կաթոլիկ պրօպագանդան, մի դպրոց հիմնելու, յատկապէս կաթոլիկութեան դէմ մի պատանէշ կանգնեցնելու նպատակով:

— Թէ ո՞ր աստիճան անհաշտ թշնամութիւն կայ երկուցեղակից ազգերի, այն է՝ Ռուսաց և Լեհացոց մէջ, երևում է վերջիններիս այն վերաբերմունքից, որ նրանք ցոյց տուին Ս. Պետերբուրգի հիմնադրութեան 200-ամեայ յորելեանի ժամանակ: Ս. Պետերբուրգի քաղաքային խորհուրդը, ի միջի այլ բաղմամբիւ հրաւերներ, ինչպէս հաղորդում է *Перк. Вѣст.*-ը, հրաւեր է ուղարկել նաև Կրակով և Լվով քաղաքներին: Եւ սորա ո՛չ միայն չեն մասնակցել Ռուսիոյ մայրաքաղաքի յորելեանին ներկայացուցիչներով կամ գրաւոր եղանակով, այլ անպատասխան են թողել հրաւերը: *Перк. Вѣст.* ասում է որ՝ երբ Լվովի քաղաքային խորհուրդի մէջ կարգացում էր Պետերբուրգի հրաւերը, տիրում էր ընդհանուր լռութիւն և ասպա խորհուրդն անցնում է հերթական հարցերին:

— Որ կաթոլիկութիւնը Գերմանիայում վերջին ժամանակներս յաջողութիւն է ունենում, դա անկասկած է: Ապացոյց դրան կարող է ծառայել դպրոցական այն վէճը, որ ծագել էր Տրիերում՝ կաթոլիկների և բողոքականների մէջ և որի յաղթանակը վերջ ի վերջոյ կաթոլիկութիւնը տարաւ յանձին Կորում կաթոլիկ եպիսկոպոսի: Այս եպիսկոպոսը Տրիերում կաթոլիկ ծնողներին արգելում է իրենց որդիներին ուղարկել այն դպրոցները, որոնք այսպէս թէ այնպէս բողոքական հոգի են կրում: Գերմանական կառավարութիւնը սկզբում թէև միջոցներ է ձեռք առնում յիշեալ եպիսկոպոսի կարգադրութեան դէմ, սակայն վերջը մինչև իսկ զիջումներ է անում նրան:

— Ֆրանսիայում կաթոլիկութիւնը համարեա թէ վերջնականապէս ընկնելու վրայ է: Որքան որ կաթոլիկութիւնը եւրոպական մի քանի երկրներում և մասնաւորապէս հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում ուժեղանում և դարգա-

նում է. նոյնքան էլ գրեթէ վտանգաւոր է դառնում նրա գրութիւնը ֆրանսիայում: Այսպէս օրինակ նորերս ֆրանսիայի Մալապոլիքն գիւղի կաթուղիի բնակչութիւնը, թողնելով կաթուղի-կութիւնը, ընդունել է ըողորականութիւն: Դրա պատճառը ժողովրդի այն խնդրի բացասումն է, որով նա դիմել էր իւր եպիսկոպոսին և նորաշէն եկեղեցու համար առանձին, սեփական քահանայ էր խնդրել:

— Վատիկանի և Միացեալ Նահանգների յարաբերութիւնը խիստ բարեկամական է և սերարժան, որ ներկայումս աւելի է ամրապնդուում նախագահ Րուզվէլթի դէպի Վատիկանը բռնած գիրքով: Ապացոյց դրան կարող է ծառայել այն շքեղ նուէրը, որ մայիսի 7-ին Միացեալ Նահանգների ներկայացուցիչ Հիւրբոն կարդինալը ներկայացրեց պապին՝ վերջինս քահանայապետութեան 25-ամեայ յորելեանի առթիւ: Այդ ընծան մի ճոխ հրատարակութիւն է նախագահների պաշտօնական գրութիւնների և նամակների՝ սկսած 1879 թ. մինչև 1897 թ., որի ճակատին նախագահը իւր սեփական ձեռքով հետևեալ մականգրութիւնն է արել. «Թէ ոչոր Րուզվէլթ, նախագահ Միացեալ Նահանգների, ընծայաբերում է ջերմաջերմ զգացմունքներով նորին Արքութեան Լևոն ԺԳ. պապին նրա յորելեանի առթիւ ձեռն գերապատիւ Հիւրբոն կարդինալի»:

— Ֆրանսիայում հէնց որ բացուեցին, ասում են ալտա-սահմանեան թերթերը, պատգամաւորների պալատի ամառուայ նիստերը, առաջին նիստում իսկ հարցապնդումներ եղան կղերական կուսակցութեան կողմից՝ կառավարութեան կօնգրեգացիաների նկատմամբ բռնած գիրքի առթով: Վիճաբանութիւններն առանձնապէս սուր կերպարանք ստացան մայիսի 6—19-ին: Հէնց որ նիստը բացուեց, կղերամիտ պատգամաւորներից Բօգրի դ'Ասսօն բարձրաձայն աղաղակեց. «Ամէն մի կաթուղիի որ մըսնում է այստեղ, պարտաւոր է աղաղակել՝ կեցցեն վանականները, կեցցէ՛ աղատութիւնը, թո՛ղ կորչին հարստահարողներն ու ճնշողները: Ապա կղերամիտ կուսակցութեան ներկայացուցիչ պատգամաւորներն իրենց հարցապնդումներն արին, որոնք սակայն չէին կարող կառավարութեան երկիւղ ազդել, որովհետև պատգամաւորների բացարձակ մեծամասնութիւնը կառավարութեան կողմն էր:

— Ֆրանսիանում ուժասպառ և քայքայուած կղերական կուսակցութիւնը ոյժ չունենալով ճակատ առ ճակատ կռուելու կառավարութեան դէմ, իր վրէժը վերջնիցս լուծելու համար, դիմել է հոգևորականութեան աններելի միջոցի, զրպարտելով կա-

ռաւարութեան ներկայացուցիչներին, գլխաւորապէս մինիստիրներին նախագահ Կոմպին և ծովային նախարար՝ Պելտանին, մեղադրելով սոցա իրենց հակաօրինական ընթացքի և կաշառակերութեան մէջ: Կոմպ յատկապէս մեղադրուում էր նրա համար, որպէս թէ Շարտրեօզի փակման ժամանակ կաշառք է պահանջել: Այս մեղադրանքը քննուելով պատգամաւորների պալատում մայիսի 6-ին և 15-ին (ն. տ.), պարզուեց, որ կղերամիւսներին մեղադրանքը ոչ այլ ինչ է, բայց թէ անլուր զրպարտութիւն: Այսպիսով կղերամիւս կուսակցութիւնը մի անգամ ևս աշխարհի առաջ պարտութիւն կրեց:

ԲՈՂՈՔԼԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Յունիսի 3-ին և 4-ին (ն. տ.) Դարմշտատում Բելինի համալսարանի աստուածաբանական գիտութեանց հեղինակաւոր ուսուցչապետ Հառնակի նախագահութեամբ դումարուել է 14-րդ աւետարանական համաժողովը: Ժողովը, ինչպէս գերմանական թերթերն են նկարագրում, խիստ բազմամարդ է եղել: Ներկայ են եղել Գերմանիայի զանազան կողմերից մասնագէտ գիտնականներ: Թողնելով ժողովի ընդհանուր նկարագրութիւնը մի կողմն, մենք համառօտ կերպով առաջ կբերենք Մարբուրգի համալսարանի քրիստոնէական բարոյագիտութեան ուսուցչապետ Հեռմանի ժողովում կարգացած դասախօսութիւնը: Այդ դասախօսութիւնը, որ կրում էր հետևեալ վերնագիրը «Յիսուսի բարոյական հայեացքները և նրանց յարաբերութիւնը ներկայ կեանքի բարոյական—ընկերավարական շարժումների հետ», տևել է մօտ մէկ ու կէս ժամ: Դասախօսը շեշտել է գլխաւորապէս քրիստոսի քարոզած արդարութեան և սիրոյ դադափարները և դրանց հիման վրայ յորձել է ցոյց առլ Փրկչի բարոյական հայեացքների յարաբերութիւնը արդի կեանքի մէջ առաջ եկող բարոյական և ընկերավարական շարժումների հետ: Նիւթն ինքնրոտինքեան խիստ ծանր և վերացական լինելով, ինչպէս die Christliche Welt-ն է ասում, ունկնդիրների վրայ չի թողել այն տպաւորութիւնը, որ սպասուում էր տաղանդաւոր ուսուցչապետից: Հեռմանի արծարծած մտքերը առիթ են տուել խիստ հետաքրքրական վիճաբանութեան, որ տևել է մօտ երկու ժամ:

— Երկու տարի է, որ Գերմանիայում «ներքին առաքելութեան ընդհանուր համաժողով չի դումարուել»: Chronik der